ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«24» հոկտեմբերի 2019 թվականի № 19-Ա

«ԳՆԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ» Ա/Ձ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «Գնել Մելքումյան» Ա/Ձ-ի նկատմամբ 2018 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 164-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ Ա/Ձ-ին 2018 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 01ԱԳ/29.4/3770-18 գրությամբ տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները վերացնելու վերաբերյալ: Զգուշացման մեջ առկա տեղեկատվության համաձայն՝ Ա/Ձ-ն ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված ընդերքօգտագործման վճարների մասով ապառքներ՝ 01.06.2018թ-ի դրությամբ պետական տուրքի մասով 270,5 հազար (երկու հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով 226,9 հազար (երկու հարյուր քսանվեց հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, ինչպես նաև սահմանված ժամկետներում լիազոր մարմին չի ներկայացրել 2017 թվականի 5-ՕՀՊ հաշվետվությունները:

Վարույթն իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից արձանագրվել է այն փաստը, որ լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով և 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-416 պայմանագրի 5.1.2 կետով նախատեսված պայմանները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք: Ա/Ձ-ն զգուշացման վերաբերյալ ծանուցումը ստացել է 2018 թվականի հուլիսի 27-ին, սակայն զգուշացման հիմքերը վերացված լինելու փաստը հավաստող որևէ փաստաթուղթ նախարարության կողմից չի ստացվել:

2018 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 164-Ա հրամանով «Գնել Մելքումյան» Ա/Ձ-ի նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ: Նախարարությունը պահպանելով օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ իրազեկել է Ա/Ձ-ին վարչական վարույթի հարուցման և վարչական լսումների վերաբերյալ: Ա/Ձ-ի կողմից վարչական վարույթի նիստերին մասնակցություն չի ապահովվել: Սույն վարչական վարույթը երկու անգամ

երկարաձգվել է հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և 6-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Գնել Մելքումյան» Ա/Ձ-ի ՀՀ Լոռու մարզի Ձկոուտի բազալտի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնել:

2. 2013 թվականի փետրվարի 11-ի օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/416 (նախկին 14/567) թույլտվությունը, լեռնահատկացման թիվ ԼՎ-416 ակտն ուժը կորցրած ճանաչել և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-416 պայմանագիրը:

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) եռօրյա ժամկետում ծանուցել անհատ ձեռնարկատիրոջը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.

2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3) սահմանված կարգով ծանուցել նաև համապատասխան պետական մարմիններին:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումն՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով և այն կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

6. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

1/24/2019

X

VERIFIED OCSP 24-Jan-19 12:07:25 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118